ՆԱԽԻՋԵՎԱՆԻ ԴՌՆԵՐՆ ՈՒ ՊԱՏՈՒՀԱՆՆԵՐԸ*

Շատերն են նկատել այն իրողությունը, որ Ղարաբաղյան բանակցային գործընթացում ստեղծված փակուղու խորացմանը զուգընթաց մեծանում է աշխարհաքաղաքական լարվածությունը ոչ միայն Արցախի, այլև Նախիջևանի շուրջը:

Արտաքուստ թվում է, թե սա պարզապես Ադրբեջանի կողմից Նախիջևանի «դիրքային առավելությունները» խաղարկելու փորձ է՝ Ղարաբաղյան նոր պատերազմում մեզ նոր սպառնալիքների առջև կանգնեցնելու համար: Մյուս կողմից էլ այս ամենի խորքում դժվար չէ նկատել դեպի Արևելք միտված՝ Թուրքիայի համաթուրանական «հին հիվանդության» նոր բռնկումը: Բայց երբ Ադրբեջանը շտապում է Նախիջևանը վերածել Հայաստանի դեմ ուղղված պոտենցիալ ռազմադաշտի, իսկ Թուրքիան այդ հայկական երկրամասի վրայով ցանկանում է վերակենդանացնել իր համաթուրանական երազանքը, նրանք իրենց կամքից անկախ բացում են Նախիջևանի **պատուհանները**, դրանով իսկ մեծապես նպաստելով տարածաշրջանի աշխարհաքաղաքական կացության փոփոխությանը: Արդյունքում սկիզբ է առնում նաև գլոբալ հարթության վրա Նախիջևանի **դռները** վերահսկող գերտերությունների շահերի մերձեցման ու սերտաճման գործընթացը: Պատճառն ակնհայտ է. Նախիջևանի հարցը շատ ավելի լայն աշխարհաքաղաքական ենթահող ունի, քան Ղարաբաղյան հակամարտությունը, իսկ նրա բանալիները գլոբալ քաղաքականության ընդհանուր փաթեթի մեջ են:

Անշուշտ, 1920-ական թվականներին Թուրքիային հաջողվել է օգտագործել Խորհրդային Ռուսաստանի դժվարություններն ու մոլորությունները՝ Նախիջևանը զավթելու, Ադրբեջանի հովանու տակ դնելու, իսկ 1930-ականներին Իրանի դժվարությունները՝ այդ երկրամասի հետ ընդհանուր սահման ձևավորելու համար: Սակայն դա բումերանգի էֆեկտ է ունեցել նրա հետագա մտադրությունների բացահայտման և կանխարգելման տեսանկյունից: Եվ երբ ԽՍՀՄ-ի փլուզման շրջանում՝ 1990-ական թվականների սկզբներին, Թուրքիայի ղեկավարությունը զորքեր էր մտցրել Նախիջևան՝այս անգամ էլ նրա տարածքից Հայաստանը թիրախավորելու համար, գերտերությունները նրան հասկացրին, որ Հայաստանի հետ

* Ընդունվել է տպագրության 04.09.2019:

գործ ունենալն իր իրավասություններից վեր է, քանզի դա «մեծ քաղաքականության» խնդիր է:

Ուստի Հայաստանի և նրա սրտում գտնվող Նախիջևանի բանալիները համաշխարհային քաղաքականության մեկ ընդհանուր փաթեթի մեջ են հայտնվել, որի վերահսկողության իրավունքը գլոբալ խաղացողները ապագայում ևս կարող են զիջել մեկը մյուսին, բայց ո՛չ Թուրքիային: Դա է պատճառը, որ տարածաշրջանում Արևմուտքի դերակատարության մեծացմանը զուգընթաց իր 100-ամյակը բոլորող 1921 թվականի մարտի 16-ի խորհրդա-թուրքական պայմանագրին զոհաբերված Նախիջևանի հարցը դանդաղ ու աննկատ կերպով վերադառնում է մեծ քաղաքականության բեմահարթակ:

Հիշեցնենք, որ դեռևս Առաջին աշխարհամարտում իր հաղթանակից հետո Մեծ Բրիտանիան իր զորքերն էր մտցրել Նախիջևան և այն հանձնել Հայաստանի Հանրապետությանը: Իսկ տարածաշրջանի խորհրդայնացումից հետո Հարավային Կովկասում մնացած խնդիրները որպես «ռուսական հարցի» մաս Արևմուտքը փոխանցել է ոչ թե Թուրքիային, այլ Խորհրդային Ռուսաստանին: Ուստի 1921 թ. մարտի 16-ի Լենին-Աթաթուրք գործարքով Նախիջևանը ճանաչվել է որպես Խորհրդային Ադրբեջանի պրոտեկտորատ, բայց ո՛չ սուվերեն տարածք: Եվ երբ Արևմուտքը կրկին վերադառնում է մեր տարածաշրջան, Մեծ Բրիտանիայի թագուհու բերանով նա մեզ կրկին հիշեցնում է Նախիջևանի հայկական պատկանելության մասին:

Պատահական չէ նաև, որ Ղարաբաղյան պատերազմից հետո փորձելով կանխել 1921 թ. մարտի 16-ի պայմանագրով տարածաշրջանում ձևավորված աշխարհաքաղաքական իրողությունների հետագա խարխլումը, Թուրքիան որդեգրել էր Ադրբեջանի միջոցով Ղարաբաղյան բանակցային գործընթացը ձգձգելու և փակուղի մտցնելու ռազմավարություն: Որովհետև Թուրքիայի նպատակը ոչ թե առանձին վերցված Ղարաբաղն էր, այլ Ղարաբաղյան նախադեպի շրջափակումը և միաժամանակ՝ տարածաշրջանի մեջ խորանալու «նախիջևանյան ցատկահարթակի» գործարկումը: Ադրբեջանի ղեկավարությանն ուղղորդելու միջոցով Թուրքիան կարողացավ Ղարաբաղյան հակամարտությունը պահել «մխացող» վիճակում՝ բանակցային գործընթացին միջամտելով միայն այն պահերին, երբ քննարկվում էին տարածքների փոխանակման միջոցով Նախիջևանից դեպի Արևելք միջանցք բացելու տարբերակները:

Անցած տարիներին Անկարան հասցրել է «վաստակել» նաև Մոսկվայի բազմանշանակ լռությունը՝ իր զորքերի Նախիջևան թափանցելու փաստի հանդեպ, որն արդեն ռազմական փորձագետների կողմից բնորոշվում է իբրև «էքսպեդիցիոն կորպուս»: Բայց քանի որ դրանով խախտվում են նաև իր «թանկարժեք ձեռքբեր-

ման»՝ 1921 թ. մարտի 16-ի պայմանագրի հայտնի դրույթները, Թուրքիան առայժմ գերադասում է «դինամիկ» ռազմական ներկայությունը, իսկ Ռուսաստանն էլ իր «քար լռությունը» փոխհատուցել է հայ-ռուսական կամ Նախիջևանյան կորպուսի ձևավորման միջոցով:

Թեև առայժմ Նախիջևանում Թուրքիան գործում է իր «հակաարևմտյան դաշնակից» Ռուսաստանի գլխի տակ փափուկ բարձ տեղադրելու միջոցով, բայց վաղն էլ կարող է գործարք առաջարկվել Արևմուտքին՝ «հակառուսական դաշնակցի» դիրքերից: Սա տիպիկ թուրքական ձեռագիր է. այսօր Ղրիմում Թուրքիան աջակցում է Ուկրաինային՝ ընդդեմ Ռուսաստանի, Սիրիայում շանտաժի է ենթարկում մերթ ԱՄՆ-ին, մերթ Ռուսաստանին, իսկ Նախիջևանում թիրախավորում է Իրանին և Հայաստանին՝ սպասելով իրադարձությունների հետագա զարգացմանը:

Ասվածի ապացույցն այն իրողությունն է, որ Թուրքիան Նախիջևանում իր ապագա հենակետի հիմքերը դնում է ոչ թե Սադարակում՝ Երևանի հարևանությամբ, կամ դեպի Ղարաբաղ տանող Հայաստանի ռազմավարական ճանապարհի մոտ, այլ հայոց Գողթան գավառի Օրդուբադ (Որդվատ) քաղաքից հարավ: Ոմանք պնդում են, թե դա արվում է Զանգեզուրի հարավով դեպի Արևելք արագ ճեղքում ապահովելու նպատակով, որպեսզի օգտագործելով ՔԲԿ-ի մարտիկներին հետապնդելու պատրվակը՝ թուրքական զորքերը հայտնվեն Մեղրիի շրջանում: Բայց ներկա հանգրվանում, քանի դեռ Թուրքիան փափուկ բարձ է դնում իր «հակաարևմտյան դաշնակից» Ռուսաստանի գլխի տակ, սա քիչ հավանական տարբերակ է, ուստի առայժմ ընթանում է ապագա սադրանքի քարոզչական նախապատրաստությունը՝ ՔԲԿ-ի մարտիկներին դեպի Հայաստան ու Իրան քշելու փորձերի տեսքով:

Բանն այն է, որ վերջին տասնամյակներում Իրանը թուրք-իրանական սահմանի երկայնքով ձևավորել է բավականին պատկառելի քրդական «սանիտարական կորդոն», որը խոցելի է միայն Նախիջևանի արևելքից: Իրանի ներսում հնարավոր կատակլիզմների դեպքում Թուրքիայի ու Իրանի սահմանների երկու կողմերում բնակվող քրդերը Նախիջևանի միջոցով վերցվելու են պարկի մեջ, որի բերանը, այսինքն՝ Ջուլֆա (Ջուղա)-Օրդուբադ հատվածը, կարող է փակվել՝ միաժամանակ կապուղիներ բացելով Թավրիզի և նրա միջոցով ողջ Ատրպատականի թրքախոս զանգվածի հետ:

Բայց անկախ նրանից՝ Ատրպատականի՞, թե՞ Մեղրիի դեմ են ուղղված Թուրքիայի նախիջևանյան նկրտումները, դրանց իրականացման հաջորդ հանգրվանում նա փորձելու է պայմաններ ստեղծել նաև Ղարաբաղի ազատագրված տարածքներին սպառնալու համար: Այդ նպատակով ներկայումս իսլամական ահաբեկիչներին

տրվող «ադրբեջանական գործուղումների» միջոցով Թուրքիան փորձում է խարխլել մեր թիկունքը, որպեսզի վաղը նրանց օգտագործի և՛ Ատրպատականի հնարավոր ապակայունացման, և՛ հայկական երկու երկրամասերի հարավը սպառնալիքի տակ դնելու համար: Քանի դեռ Թուրքիան Ռուսաստանի «հակաարևմտյան դաշնակիցն» է, նրա փոխարեն գործելու են իսլամական ահաբեկիչները, որոնք Ադրբեջանում վերածվելու են շեհիդների՝ կրճատելով այդ երկրի մարտական կորուստները, իսկ Ատրպատականում՝ «ատելի ֆարսերի» դեմ պայքարող «հեղափոխականների»: Բայց երբ տարածաշրջանից Մոսկվային դուրս մղելու Արևմուտքի ջանքերին կգումարվեն նաև Ռուսաստանի ներքաղաքական ցնցումները, Թուրքիան պատրաստ կլինի նաև իր հաջորդ քայլին:

Նախիջևանը Թուրքիայի համար բազմաֆունկցիոնալ պայթուցիչ է, որի թիրախի ընտրությունը կախված է լինելու նրանից, թե ո՛ր ուղղությամբ են փչելու համաշխարհային քաղաքականության քամիները, և առաջինը ո՞ր հարևանի ձեռքն է արյունոտվելու: Քանզի ո՛ր ուղղությամբ էլ ծավալվի Նախիջևանից սկիզբ առնող Թուրքիայի ագրեսիան, ի վերջո նա ծառայելու է նույն նպատակին՝ համաթուրանական երազանքի իրականացմանը:

Ուրեմն՝ քանի դեռ պահպանվում է Արևմուտք-Ռուսաստան անհաշտ դիմակայությունը, և՛ Հայաստանում Ռուսաստանի ռազմական ներկայությունը չեզոքացնելու՝ Արևմուտքի ծրագրերից, և՛ դրանց հակազդելու Ռուսաստանի փորձերից սեփական փայաբաժինն ակնկալող Թուրքիան Նախիջևանի միջոցով ստանձնում է տարածաշրջանային խաղի երրորդ կողմի դերակատարությունը, ինչը մեզ համար երկու պոտենցիալ վտանգներ է պարունակում.

ա) «ռազմավարական երկխոսության» կեղծ ցուցանակի տակ պարբերաբար բացահայտվող՝ ռուս-թուրքական հակասությունների տեղափոխումը նախիջևանյան թատերաբեմ և դրանց լուծման համար կիրառվող «փոխզիջումների», իսկ իրականում՝ պարզ առևտրի հնարավոր ազդեցությունը մեր տարածաշրջանային դիրքերի վրա,

բ) Ռուսաստանում ներքաղաքական պայքարի սրման և որպես դրա հետևանք՝ նրա ոխերիմ բարեկամի ախորժակների մեծացման՝ «1917 թվականի սինդրոմի» կրկնությունը, որը տարածաշրջանում ուժային ներկայության վակուումի ձևավորման պարագայում մեզ համար կարող է վերածվել լուրջ վտանգի:

Այս ընթացիկ սպառնալիքների առկայության պայմաններում Հայաստանն առայժմ չի կարող դիմել կտրուկ քայլերի, բայց չի կարող նաև իր վրա չգրավել Թուրքիային Նախիջևանից դուրս մղելու մեջ շահագրգիռ ուժային կենտրոնների ուշադրությունը: Նախիջևանից դեպի Արևելք Թուրքիայի հնարավոր ագրեսիայի կա-

սեցման գործում մեր անվերապահ դաշնակիցներն են Իրանն ու Չինաստանը, իսկ Արևմուտք-Ռուսաստան հարաբերություններում անխուսափելի դարձող հստակեցումները կարող են ընդլայնել մեր պոտենցիալ աջակիցների ճամբարը, քանզի Թուրքիային զսպելու հարցում նրանց շահերը համընկնում են:

ԱՄՆ-ի ու Ռուսաստանի հակասություններից ցուցադրաբար օգտվելով՝ մերթ Սիրիա, մերթ Վրաստան, մերթ Նախիջևան, մերթ Արևելյան Միջերկրածովքի գազի հանքավայրեր թափանցելու միջոցով Թուրքիան բազմիցս հատել է գլոբալ քաղաքականության կարմիր գծերը: Ուստի գլոբալ խաղի մասնակիցները կարող են արագորեն հզորացնել Հայաստանը, եթե մեր երկրի նոր ղեկավարությունը խորապես գիտակցի ներկայումս մեզ ընձեռված ժամանակային պատուհանի՝ **ոսկու արժեք** ունենալու փաստը: Առաջիկայում Հայաստանը կարող է իրենով շահագրգռել ուժի համաշխարհային կենտրոններին՝ նրանցից ակնկալելով մեծամասշտաբ աջակցություն՝ ռազմաքաղաքական ինքնուրույն գործոն դառնալու ներուժ-կարողականություն ձևավորելու համար:

Համաշխարհային քաղաքականության տիրույթում գտնվող հիմնախնդրի՝ Նախիջևանի դռների վերահսկողության հարցը մեծապես կարևորող գերտերությունների շահերի սերտաճման որոշակի հանգրվանում միանգամայն իրական է թվում նաև գլոբալ կոնսենսուսի ձևավորումը՝ Թուրքիայի համաթուրանական նկրտումների պատուհան Նախիջևանի հայկականության վերականգնման հարցում: Գերտերությունների մրցակցության ու համագործակցության զույգ կշռույթներից երկրորդի անշեղ մեծացման միտումը մեզ աստիճանաբար մոտեցնում է այդ նվիրական պահին:

Խմբ.

THE DOORS AND WINDOWS OF NAKHIJEVAN

Edit.

ДВЕРИ И ОКНА НАХИДЖЕВАНА

Ред.

Վէմ համահայկական հանդես ԺԱ(ԺԷ) տարի, թիվ 3 (67), հուլիս-սեպտեմբեր, 2019